Այսուել թուրքն է մեզ մորթում ,  
Համարում են մեզ մրջին  
Ինչ որ մեզ թանկագին է  
Մեր ձեռքից են խլում :  
Գնում եմ ելն .  
Ուխտել եմ ելն .

### Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ա Կ Ա Ն Ւ Ն Ե Ր Գ Ը

Միբելի դաշոյն , ան ատրճանակ ,  
Մանաւանող մօսին կեսնք ես գու մեր ,  
Երբ քեզ ձեռք առնի հայդուկ բնդունակ  
Ցիր ու ցան կանէ թշնամու բանակ :

Դուք էք մազի կեսնք չնորհողը  
Փրկիչ ու արև հանդիսացողը  
Թշնամուց վրէժ սրտի թախիծը ,  
Լուծող թշնամից ցաւ փարատողը :

Ժնեւից եկած նւէր թանկագին  
Կուռղ անձնւէր այն դաշնակցականին  
Ներշնչէ հոգի վեհ ազատութեան ,  
Այս զէնքով վրկենք ամբողջ Հայաստան :

Ժնեւից եկած մօսին հրացան  
Դեռ քեզ կրելու չեմ ելած արժան ,  
Պարզ հոգւով կերպնում , պաղ կուրծքիս  
սեղմեմ ,  
Հայդուկի վրէժը քեզանով լուծեմ ,

Սուրբ Դաշնակցութեան անվեհեր անուան  
Անշէջ կրակը սուիր ֆեղայուն :  
Սրակին այրւած անձնւէր ֆեղան  
Կը փութայ գնալ դէպի Հայաստան :

---

Ա Զ Ա Յ Ն Ա Ռ Փ Ե Զ

Աւ թող գաղըին կայլակը աղի  
Դասն արտասուաց մշտահոս ,  
Ի տես սիրոյդ իմ անձկալի  
Ժպիտ ցանուին հոն ու հոս :

Ողջոյն առ քեզ  
Որ ափանս  
Շուրջա անհուն  
Ցնծութիւն :

Դու կեանք սուիր թառամ ծաղկին  
Գու կենապոյր չնչերով .  
Տես, որպիսի վարդեր փթթին  
Թեւիլ ներքեւ որտիր քով :

Ծաղկէ փնջիկ  
Ես մնջիկ  
Մէրս անթառամ  
Քեզի տամ :

Լեզու տուիր մունջ սոխակին  
Գաղնանատիպ քու կեանքով ,  
Քընար սուիր ինձ խանդաղին  
Երդել ըղքեղ օրերով :

Դաշնակ քնար  
Մշտահար  
Քեզ իմ երդեր  
Քեզ նուէր :

Մա՞րդ, հըրեշտա՞կ, սարեա՞կ, սոխա՞կ ,  
Առ ո՞ դիմես դու փութով ,  
Սրժան թառիդ չունիմ վանդակ  
Քեզ ո՞ւր հանդիստ անխոռվ :

Ի կայթ ի թիռ  
Ե'կ հանդիր ,  
Այս կուրծքի տակ  
Կայ վանդակ :

Բարեաւ եկիր , հողւոյս հատոր ,  
Դու որ արցունք իմ աչքէն  
Կամ սուզ կարօտ բազմասոչոր  
Կուզաս վանդել իմ սրտէն :

Սիրազա անդէն  
Քեզ Եղեմ :  
Սարքեմ բռւրվառ  
Խնկավառ :

Բարեաւ եկիր , ապրիս երկար  
Դարն ողջունէ կեանքդ անդին  
Ընդ որ ուրախ քեզ անդադար  
Քնարս երդէ ցոծագին :

Կեանքիս դու դարդ  
Ըլլաս վարդ  
Շուշանս յաւէտ  
Հոսաւէտ :

ՏԻԳՐԱՆ ՃԳՆԱԿՈՐԵԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից ,  
Կարօտ թողուս սերտ բարեկոմ քեզանից .  
Մեր ամենիս դու մայր էիր զրթուատ ,  
Սրդ հեռանաս՝ մեզ մութ պատէ անփարատ :

Քո սուրբ ձեռօք մեր վերքերը շատ անդամ  
Հուանայիր, գեղ դընէիր ամէն ժամ։  
Քո մազերից ոլորէիր վիրակապ,  
Քո բուրոր կեանք աղջիդ համար էր անկապ։

Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի,  
Մեր սիրան, հոգին քեղ հետ տանիս, մաքրուհի,  
Գլնաս բարեաս, մեր յոյս, հաւաս քեղ ընկեր,  
Աջն ու Խաչը քեղ պահապան զօր զիշեր։

---

### Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն

Հով արէք, ասրե՛ր ջան, հով արէք,  
Իմ դարդին դարման արէք։ —  
Սարերը հով չեն անում,  
Իմ դարդին դարման անում։  
  
Ամպե՛ր, ամպե՛ր, մը քիչ զով արէք,  
Վարսր անձրև թափէք, ծով արէք.  
Գէշ մարդու օր-արեը  
Սեւ հողի տակով արէք։

Հով արէք, ամպե՛ր ջան, հով արէք,  
Իմ դարդին դարման արէք։ —  
Սարերը հով չեն անում,  
Իմ դարդին դարման անում։  
  
Սարեր, ձորեր, դաշտեր ու ջրեր,  
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրներ,  
Մի՛ վեր կացէք, խմացէք,  
Տեսէ՛ իմ սրատի ցաւեր։

Հով արէք, ամպե՛ր ջան, հով արէք,  
Իմ դարդին դարման արէք։ —  
Սարերը հով չեն անում,  
Իմ դարդին դարման անում։

---

### Լ Ո Ւ Ս Ւ Ն

Արդեօք սըրտիս իմ աղխարտգին  
Հառաչանքներ քեղ կը հասնի՞ն,  
Աչքէս արցունք որ կը հսկին  
Կը ցուանա՞ն քեղմով, լուսի՞ն։

Դու անդ արտում երկնից երես  
Ի՞նչ են ցուերն մարդուս, գիտե՞ս,  
Գիտե՞ս թէ սիրա մ'ո՞ն ի՞նչ կ'զգայ՝  
Սիրելիէն երը զուրկ մ'նայ։

Երբ մրթութեան խուարին մէջ  
Կը ցուանսս դու բոցարե.  
Ալ իստար ես դու ինձ լստուեր  
Զի կորուսի սիրելւոյս սէր։

---

### Յ Ո Ւ Ս Ա Հ Ա Տ Ս Ս Ե Ր Ա Հ Ա Ր Ի Ն

Գիշեր ցորեկ կը հստաշեմ, ա՛խ, օրիորդ, քու սիրոյդ,  
Մեւ աչքերուդ վարդ այտերուդ գարնուեցայ, ինչ օդուտ,  
Աչքերուդ, այտերուդ եւ ոսկեթել մազերուդ,  
Միայն քեղի սս կաղաչեմ որ ունենաս քիչ մը գութ։

Գիտե՞ս, անգութ, որ իմ սրտիկս չի գիմանար այս ցաւուն,  
Քեղի համար ա՛լ չը դադրիր աչքիս արցունք օրն ի բուն,  
Քեղ միայն կը յիշեմ, թէ՛ քուն ըլլամ թէ՛ արթուն,  
Թէ մութ ըլլայ միտքս կուզան նոյնպէս եւ առաւօտուն։

Շատ աղւորներ թէե տեսայ, սիրսս միայն քեղ սիրեց,  
Ո՞չ, չե՛մ զիտեր, ըսէ՛ ինձի, թէ քու սրտիկ ո՞վ ամբոց,  
Քու բարի մայրիկդ իրեն փեսայ ո՞վ ընտրեց.  
Քերի կ'ըլլամ քու մօրկանըդ եթէ զիս զուրկ չի ձգեց։

Ուրախ էի, գիտե՞ս, օր մը ես քեղի նստեցուցի,  
Սա ներսիդիս, ինչ կայ չկայ, ամնիքն ալ հասկցուցի,

Անուշ բոյրդ զիս թովեց, քենէ վարդ մը փրցուցի,  
Այն ինչ օր էր, ինչ ժամանակ, խելքս գլխէս թռցուցի:

Ուր էր որ այն աղւոր աղջիկն ըլլար ինծի ամուսին,  
Եւ երջանիկ իշխանաց պէս տարբէնիք մնաք միասին.  
Կըլորիկ, թօմազուլիկ զաւակներնիս մեր չորս դին,  
Ես ծիսէի իմ սիկառը, ասղնադործէր իմ տիկին:

Քեզի համար թափառական, մերկ ու թշուառ եղեր եմ,  
Քեզի համար հալեր մաշեր, ոսկոր ու մորթ դարձեր եմ,  
Ալ հերիք զիս խոցես, ահա ոսքրդ ինկեր եմ,  
Հսէ ինծի բառ մը երջանիկ թէ «Ես ըզքեզ կը սիրեմ»:

Ժամանակ մը ասանկ երթանք, նայինք ի՞նչ ընես պիտի,  
Ուրիշ մը սիրտ պիտի տաս, վախնամ զիս ձգես պիտի,  
«Ե՛լ գնա, ասկէ վերջ տէր ունիմ» ըսես պիտի,  
Հսել է այս սիրականը վերջը մեռցինես սիտի:

Ն. 2.

## ՆՈՐԱԾԻԼ ՏԵՐԵՒՔ

Հազիւ լուսոյ դոլդոյ փայլ  
Պատուաց զամզոց մեւ մրտայլ,  
Մեր դաշտերուն՝ հազիւ ձիւն  
Դարձոց զիւրեանց սեւութիւն.  
Եւ դուք վակտոյժ ի վրթիթ.  
Գայք մնալ ժըպիտ ի քըթիթ.  
Նախածիլ տերեւք,  
Բարեւք ձեզ, բարեւք:

Դեռ մարդերաւն մեր ցըրտիկ  
Չեկաւ այցող ծիծառնիկ,  
Դեռ սոխակին հեշտավանդ  
Չետուն սործորք արձագանդ,  
Եւ դուք փութայք սիրալիք  
Խընդից հրեշտակը ի յերկիր.  
Նորածիլ տերեւք,  
Բարեւք ձեզ, բարեւք:

Կանաչ երանգ ձեր փափկիկ,  
Զեւ եւ իրան ձեր մանրիկ,  
Ո՛հ, աչերուն մեր ծարաւ.  
Խնչպէս անուշ փայլեցաւ.  
Տըխուր ողիք ձեր աեսքին  
Կը զւարդթանամ և լափոփին.

Նորաբոյս տերեւք,  
Բարեւք ձեզ, բարեւք:

Եկե՞ք, եկե՞ք մեր հովտաց  
Շողալ ի ծոց մըթազգեաց.  
Եկե՞ք ծառաց մեր ի դող  
Զգել ի գլուխ կանաչ քող.  
Եկե՞ք ալրասում բնութեան  
Նոր շըպարել կիրապարան.  
Առաջին տերեւք  
Բարեւք ձեզ, բարեւք:

Եկէ ք, գարնան նորաբոյս  
Ծագել վարդից արշալոյս,  
Եկե՞ք հրաւէր տալ առ սիք  
Խաղալ ընդ ձեր խոպոպիք.  
Ծաղկանցն ասէ՞ք քաղցրահոռ.  
Գան, ո՞հ, կարօտ եմք կարօտ.  
Նոխածին տերեւք,  
Բարեւք ձեզ, բարեւք:

Եկէ ք, եկէ ք ո՞հ տերեւք,  
Եկէ ք յուսոյ յանուշ թեւք  
Մեր սիրելեաց տապանին  
Ծածկել ըգչող արխրագին.  
Ո՛հ, այն սկերց անձկալի  
Եղէ ք պըսակ ցօղալի,  
Նորածիլ տերեւք,  
Ո՛վ հրեշտակաց թեւք:

Ե Դ Ա Խ Ա Բ Գ Ե Կ Վ Ա Բ Գ Ո Ւ Ի Հ Ի

Առ կիթառող ո՛ սիրուհիս  
Անկողնոյս քով եկ նշատէ,  
Բ՛չ, ափափանը դու իմ սրբախ  
Զարկ կիթառը ու երգէ:

Անտանելի վիճակիս մէջ  
Դու միայն ես մնացած  
Զքեղ ինձի երկինք վերին  
Միփթարտնք է չնորհած:

Այս', ինչպէս ափափանը է  
Զքեղ քովը տեսնել մ՞շտ  
Քու նայուածքը կը փարատէ  
Սըրոխ բոլոր ցաւ և վիշտ:

Բաց ի քենէ զով տնիմ, զով,  
Վարդուհիդ իմ զբժասիրտ,  
Որ իմ մահուան անկողնոյս քով  
Տայ ինձ սիրոյ մի ժըպիտ:

Յաւէրժ երկինք փառք լնայեց  
Ինձ ի մահուան անկողնոյս  
Որ պարդեւեց զքեղ ինձի  
Անբուժելի ցաւերտուս:

Ո՛չ, անպարտ եմ ես մնացած  
Սպատեսիլ մորկ մայրէ,  
Բոլորովին մորկ մնացած  
Մէր չեմ տեսած ծնողքէ:

Անկըրելի իմ ցաւերըս  
Զիս չեն նեղեր բնաւին  
Երբ շարունակ ականջներըս  
Լսն անոյշ ձայն քոյն:

Ո՛չ, ինչ քաղցր է իմ ականջիս  
Դաշնակտոր քու ձայնըրդ  
Նոր ուժ կուտայ իմին սրբախ  
Սիրոլիր զայլայլիլը:

Վերջին շունչըս փչելու մօտ  
Եթէ համբոյրըդ զգամ,  
Անմահութեան դրախտին մէջ  
Ուրախութեամբ կը մանսոմ:

Երգեմ, զարնեմ իմ կիթառըս  
Բ՛չ, դու Եղուարդ սիրելիդ  
Յուսալով որ իմ երգերըս  
Ուրախութիւն տան սրբախդ:

Ո՛ բերան իմ, քաղցըր երգէ',  
Ո՛ քնար իմ, քաղցըր հնչէ,  
Որ սիրելիս միփթարուի  
Եւ իւր վըշտերն ամոքի:

---

Այս է վերջին հանգըստարան  
Զոյդ մը անսեղ տատրակաց  
Որ աշխարհիս իրարու սէր  
Հազիւ էին վայելած:

---

Ս Ի Բ Ո Յ Զ Զ Ո Հ Ե Ր

Լըճի մէջ նուտկը  
Մեղմ հողմիկ կը տանի,  
Նորա մէջ նըստած է  
Սիրահար պատանի:

Պատանին ձեռքն ունի  
Կիթարա ու կ'երգէ,  
Իսկ քամին կը փախցնու  
Նստակը եղերքէ:

Լըճուկին մէջը կայ  
Քարաշէն մի ամրոց,  
Սիրուհոյ բնակարան՝  
Հանսապաղ փակ ու զոց:

Պատանոյ նաւակը  
Դէպ ամրոց կը վազէր  
Ուր նորս անձկալին  
Սըրաստրոփ կ'ըսպասէր :

Մեղմ հովը տեղի,  
Աւելի սասավացաւ,  
Երկնաքը թուխալ պատեց  
Փռթորիկ բարձրացաւ :

Ալիքի լեռները  
Գոռալով կը ծրիան,  
Պատանին աներկիւղ  
Կը նուագէ կիթարան :

Լուսինը ամպերի  
Տակերէն երեւեցաւ  
Սոսկալի աղէափ  
Պատկերը բացուեցաւ :

Կէս ձամբան ալիքը  
Նաւակին խըփուեցան,  
Նաւակը փրչրեցին  
Յոյս չի կայ փրկութեան :

Պատանին աչքերը  
Լուսեակին բարձրացուց  
Կիթարի լարերը  
Նու ուժգին հրնչեցուց :

«Տա՛ր վերջին խօսքերս  
Անձկալւոյս, ո՞վ լուսին,  
Թէ՛ քաղցրիկ անոնը՝  
Ցիւլով կը մնանիմ :»

Դադրեցաւ փոթորիկ,  
Ու ալիք պատկեցան  
Զըրի վրայ կը սորտանք  
Նաւակի երեւեցան :

Սիրուհին սրբաստրոփ՝  
Նայեցաւ լըճակին,  
Հասկացաւ դասնութիւն՝  
Իւր անդաշղ վիճակին :

«Երարմէ բաժնեցին  
Մեղ աշխարհ և այս կեանք,  
Գէ՛թ մահով այսուհետ  
Զըրի տակ միանանք» :

Ասաց, և աղաղակ  
Բարձրացուց նա ուժգին,  
Գրլորվեց, զոհ եղաւ  
Անկուշուում ծովակին :

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՄԱ

## ԳԱՒԱՌԱԿԱՆ

Դալիչու ձամբէն առող ա  
Օյ աման, աման, աման, աման . հէյ, հօյ աման:  
Անտոն կայներ Աշխէն կուզա  
Խորոտ էր Աշխէնը  
Կոլոտ էր Աշխէնը :

Անտոնենց դրանը չիներ,  
Օյ աման, աման, աման, աման . հէյ հօյ աման:  
Աշխէնին տարան գիշեր,  
Խորոտ էր Աշխէնը  
Կոլոտ էր Աշխէնը :

Անտոնին ձիու բաշը,  
Օյ աման, աման, աման, աման . հէյ հօյ աման:  
Աշխէնին դրին խաչը,  
Խորոտ էր Աշխէնը  
Կոլոտ էր Աշխէնը :

## ՕՍՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

Գալուք'ն էյ վաթանտաշլար, սէլինէլիմ գարտաշլար.  
Իշխէ պու պիր մէսէրբէթ, եաշապն Օսմանլըլար,  
Եաշապն հիւրրիյէթ, եաշապն ատալէթ, եաշապն միլէթ  
» միւսալաթ, « օրտումուղ, » ասքէր:

Կիձէլէր կիւնափիւր օլտու, տիսէլէր րուփ չէն օլտու.  
Վաթանտաշլար չօդ եաշա, միլէթիմիլ շաղ օլտու:  
Եաշապն հիւրրիյէթ, ևն. ևն. :

Պիր ինամն իթտի խիւտու, նէ րիւեա ալըր նէ իւլեա.  
Սէօլէյէլիմ գարտաշլար, վաթանտաշլար չօդ եաշա:  
Եաշապն հիւրրիյէթ, ևն. ևն. :

Կիձէլէր հէփ փարլահօր, օսմանլըլար եաշայօր,  
Ա՛լ գալէմի առ' ւրմա, եազ, հաֆիյէլիր չաթլայօր:  
Եաշապն հիւրրիյէթ, ևն. ևն. :

## Մ Ա Հ

Հայրիկը ծերացեր է  
Ազգին վրաց խորհելով  
Ազատութիւն կը դոչէ  
Սէր միտթիւն ձայնելով:

Հայուն ականջը խուլ է,  
Զի տեսներ աչքը կոյր է.  
Կը բանաց ականջ աչքեր,  
Հայրիկն քաջ քարողներ:

Ո՞վ որ տակաւին խուլ է  
Զի տեսներ աչքը կոյր է,  
Թող երթայ էջմիածին  
Բժշկուի ու դատնայ:

Հայրիկին քաջ քարողներ  
Մեղի հանեցին լեռներ,  
Ազգին համար կոռելու,  
Հայրենիքն փրկելու:

Ո՞վ հայրիկ դու ո՞ւր տեղ ես,  
Էջմիածին բաղմար ես,  
Հայերը կուլան կ'ողբան,  
Եկուր ու տես Հայաստան:

## Հ Ո Գ Ս Զ Է

Կ'ըսեն թէ աղջիկ մը  
Սիրուն ցուցունողը զարդերն են,  
Թէկ ըլլաց տգեղ  
Չունենայ սիրու անսեղ՝

Կը սիրեն  
Թող երթան սիրեն  
Քծնին ու շոյեն.  
Իմ ուզածս այդ չէ  
Բայց հոգս չէ հոգս չէ  
Թէ աշխարհք ի՞նչ կ'ըսէ:

Կ'ըսեն թէ աղջիկ մը  
Ամուսնացնողը օժիան է  
Թէկ ըլլաց անբան  
Կամ լուռ մունջ ստունան,  
Ան կ'առնեն

Թող երթան առնեն  
Առածնին մարսեն,  
Իմ ուզածս այդ չէ  
Բայց հոգս չէ հոգս չէ  
Թէ աշխարհք ի՞նչ կ'ըսէ:

Կ'ըսեն թէ աղջիկ մը  
Փայուն ցուցնողը պարերն են,  
Թեթեւոլիկ աղայք  
Զայս վնասուեն մինուկ

Որ պարեն

Թող երթան պարեն,  
Կոչիկնին մաշեն.

Իմ ուզածս այդ չէ  
Բայց հոգս չէ հոգս չէ  
Թէ աշխարհք ինչ կ'ըսէ :

Պէտք է որ աղջիկ մը  
Սիրէ պարզութիւնը պատփառ,  
Զիսայ սիրս անմատն  
Մարդարփառ խողին

Բերանը,

Թող երթայ սիրէ  
Սիրածը պաշաէ

Իմ ուզածս այդ է  
Բայց հոգս չէ հոգս չէ  
Թէ աշխարհք ինչ կ'ըսէ :

## Մ Ր Գ ԱՎԱՃԱՌ

Սրինցիր սիկնին քունէդ,  
Մրգավաճառըն եկաւ,  
Քու թօմպուլիկ զալըներուդ  
Փայլուն ու թարմ միրդ բերաւ,  
Աժան աժան առամ պիտի,  
Որ սակառս չուտ պարսպուի:

Զմիւէն բերի տուի,  
Խոշոր հասիկով նուռը,  
Թէ անուշ և թէ թթու,  
Որն որ կ'ողեն զան առ դու:

Զանեն նէ ալ մէյ մը տես  
Երթամ նէ ես չեմ դասնար ես :

Ետքայէն նոր զրկեցին

Գլխուս չափ բօրթուկալներ,

Երբ մէկ հաս մը կեղուեցի

Բերնիս ջորերն կը վազէր :

Եթէ կ'ողեն մէկ հաս առ,

Բայց բոլորէն վար չեմ տար :

Անմանական հաս բուրէ

Խընձորըն Ամասիայի,

Որ աղէկ մէզէ կ'ըլլայ

Անուշիկ մասափայի :

Թէ օդի չես գործածեր

Մաղմաղի մէջ եփէ կեր :

Հազար այս մեծ սերկեւիլ,

Որուն նման տեղ մը չկայ.

Թէ ինծի չես հաւատար,

Ելի մէյվախօչ զընա՛ :

Զես երթար նէ ասկից առ,

Խաթրը խութրը խոճ տէ կեր :

Մուցայ կարագի նման տանձս,

Որ կ'արժէ բոլոր գանձըս.

Հաստ մ'առ կեր լու մը փորձէ,

Թէ ակւաներդդ կարծրը է :

Զանեն նէ ալ մէյ մը տես,

Երթամ նէ չեմ դասնար ես :

Հոգիս բերանըն եկաւ,

Մինչեւ որ զըսայ այս նուշ,

Կոսրէ կե՛ր չաթրը չութրը,

Երակներդդ կաթ լիցուր :

Զանեն նէ ալ մէյ մը տես,

Երթամ նէ չեմ դասնար ես.

Սյաօր ծառէն առի վար  
Սյս ընկուղ կարծր ու թարմ,  
Որ պիտուկի պէս լեցուն  
Եւ նուշէն վար չի մնար:  
Չառնես նէ ալ մէյ մը տես,  
Երթամ նէ չեմ դառնար ես:  
  
Դեռ ո՞ր մէկ միրգերս գովեմ,  
Թուխ կաղի՞նս թէ չամիչս,  
Թէ Պրուսյի շագանակս,  
Կամ Շամհն բերած արմաւս.  
Ամնքն ալ անուշ ու թարմ,  
Ուտես նէ դու կ'առնես համ:  
  
Թէ քու ուղած միրգերդ,  
Սակառիս մէջ չունիմ ես:  
Սյաօրուցնէ ապազրէ,  
Վաղն առտու կը բերեմ քեզ:  
Ամնքն ալ անուշ ու թարմ,  
Ուտես նէ դու կ'առնես համ:  
  
Տե՛ս կշառքս ալ ինձ նրման,  
Մազի չափ ծուռ մուռ չունի.  
Մանաւանդ արրամներըս,  
Որ ցորեն մը պակաս չունի:  
Աժան աժան տամ պիտի,  
Որ սակառս չուտ պարպուի:  
  
Իսկ թէ առնելու միաք չունիս,  
Մեղք եմ մը՝ վար դներ զիս.  
Կանուխէկ երթամ գործիս,  
Հաց ճարեմ իմ տուտուիս:  
Զի թէ պարապ տուն դառնամ,  
Հէմ ծեծ, հէմ դուրսը կը մնամ:  
Գ. Լ. ՌԵՏՍՈՒՆԻ

### ՀԻՆ ԳԷՇ ԱՏԵՆ

Որչափ մարդիկ ավան ու  
Երբոր զիրար անսնեն  
Բարեւ կուտան սիրով  
Ինչ կայ չիկոյ կրսեն:  
Վայ, գէշ ատեն հա՛, հա՛, հա՛,  
Անշան բան հա՛, հա՛, հա՛,  
Գէշ ատեն  
Իրաւ շատ անպիտան:  
  
Որովհետեւ հիմայ  
Պղսեցւոց հարկ չիկայ  
Եւրոպացիք բոլոր  
Քսակնիս պարպեն կոր:  
Վայ, գէշ եւն:  
  
Մեր աղջիկներն ըսես,  
Մօտայի խենդեր են  
Ֆիստան ճանփէս բարէս  
Շինես՝ բուքլէ կ'ուզեն:  
Վայ, գէշ եւն:  
  
Քուռչի մը կտորին  
Հազարաւոր ֆրանք  
Կուտան ու կը հագնին  
Եւ կընեն շատ յարգ:  
Վայ, գէշ եւն:  
  
Չուկին եւելցուկէն  
Քիչ մը ալիւր կ'առնեն  
Ազւորնալու համար  
Երեմնին կը քսեն:  
Վայ, գէշ եւն:  
  
Որն իր էրկանը  
Կը պօռայ կ'սպառնայ,

Ուրիշ մ'ալ անդին  
Եսոր էրիկ կը դահնաց :  
Վայ, գէշ են :

Շատ մ'ալ աղջիկներ  
Որ էրիկ չեն դաեր  
Վանքերը կ'երթան  
Որ սրբուհի ըլլան :  
Վայ, գէշ են :

Սա պառաւ կրիկներ  
Բաներնին են թողեր  
Հոս հոն կը վազվառեն  
Որ կաթնապուր եփեն :  
Վայ, գէշ են :

Երիտասարդները  
Թէ հաշուի՛տակ առնես,  
Աղջկանց ինչ որ ըսես  
Նոյնը պիտի գտնես :  
Վայ, գէշ են :

Գոմշոին խանէն  
Շատ աշկերտներ ելան  
Տունն ու խանութ ծախած  
Բորդ ու բասպուճ փախան :  
Վայ, գէշ են :

Շատ մը ամնկուտիներ  
Բանի գործի աէր չեն  
Կարգուելու կ'ելլեն  
Թրախօնա կ ուղեն :  
Վայ, գէշ են :

Թրախօմայալ  
Աղջիկ կը վնասուն

Նայիս քիչ առենէն  
Տունէն կը վռնտեն :  
Վայ, գէշ են :

Շատ մ'ալ զէլզէկներ  
Գաղղիկնէն են սպիկեր  
Պօն ժուռ, պիէն մասամ  
Ուրիշ բան ըսես չիյտեն :  
Վայ, գէշ են :

Աղջին գործելն լսես  
Պէ ալան քէնալինէ  
Թէ որ ասանկ երթաց  
Բաներնիս բուսած է :  
Վայ, գէշ են :

Աղջառէր ենք կ'ըսեն  
Մինակ իրնինք կը լսեն,  
Սատկի եկած ատենը  
Մէկէն կծիկը կը դնեն :  
Վայ, գէշ են :

### Ե Բ Գ Ս Ա Տ Ւ Ի

Մենք ունինք պեսներ մօրուք սոսկալի ,  
Մենք ունինք եղջիւր պոչիկ սատանի .  
Ուր երթանք ամէն մարդ որ մազ նմանի ,  
Եկէք միաբան ինդպանք մէկ բերսն :

Դուք անպիտան քաջեր և դու սատանաց ,  
Մեր շուքը ուր փոյ է հոն ծեծ անիբընաց .  
Կորիք, չէ նէ պոչերնիդ կտրենք հոս մնայ ,  
Եկէք միաբան ինդպանք մէկ բերսն :

Եւ դու կտղկածե նայուածքու ծիծաղի ,  
Քալուածքու, շարժուուծքու նմանիս թօսպաղի .

Կից չկերած ծեծ չուտուծ չուտով գուրս փախի ,  
Տանք մենք ձեռք ձեռքի խնդանք մէկ բերան :  
Ականջներդ երկայն խնդրդ լինչ կարճ է ,  
Ափրիկէի մէջ ասիկայ արջ է .  
Ելէ խաղայ նէ մեր շունչն վար չէ ,  
Եկէք բարձրաձայն խնդանք մէկ բերան :  
Կուկուլիկ պօռայ՝ անի խօրօղ է ,  
Զենքերը մէջքը ան ալ սօլօղ է .  
Հըպարտ հոգիին սիրար գոռող է ,  
Եկէք ասոր վրայ ինդանք մէկ բերան :  
Բաժակք ձեռքերնիս իրար զարնուի ,  
Բերաննիս դէնենք թող վար պարպուի .  
Անուշ մը հասուր մէզէ լլուի ,  
Բանանք բերաննիս խնդանք մէկ բերան .

Այս տեղս հինգ մարդ չորս հատ ալ աղջիկ .  
Սատանի նման երկուք ալ մանչիկ .  
Դուռն ամուր գոցեմ չըլլաց սր փախչիք ,  
Հա՛ն, հա՛ն, պօռալով խնդանք՝ մէկ բերան :

### ԾԵՐՆ ՎԱՆԱՅ

Մութ է գիշերս, ինչպէս սիրտս ալ ,  
Եւ թուիս ալիք մըշասփրիթուր  
Վանայ ծովու ծիածաւալ  
Հառաչանօք լի են արխուր :  
Գոց են ամպով ասաղոնք . . . և յոյս :  
Դեռ շատ հեռու է Արշալոյս :  
Ի՞վ հազուհի դուտար իմ Մեհեկ ,  
Շուշան և վարդ դաշտաց մերոց ,  
Եկո՞ւ ու հօրդ ծերուկ և հէք  
Առաջնորդէ՛ ի Զորին Հայոց .  
Գոց են ամպով , եւն :

Քու սիրատարի կրտիճ Արտակ  
Տըխուր երգեց, ո՞հ , այս գիշեր .  
Սէրն էր երգոց իւր նըպատակ ,  
Բայց թորգոմայ զաղէտսն յիշէր :  
Գոց են ամպով , եւն :

«Ո՞հ , ինչուան ե՞րբ հաճոյք և սէր ,  
Առանց սուգի պիտի չըլլան .»  
Այսպէս ՚ի քնարն իւր նա երգէր ,  
Ու արցունքով աչք մեր լըցան :  
Գոց են ամպով , եւն :

Հոս են շիրիմք մեր նախահարց .  
Նոն մի ունի սամէն դամիսան .  
Երբ փոթորիկ գուսայ յանկարծ ,  
Հեծեն, նընջող ոգւոց փոխան ,  
Գոց են ամպով , եւն :

Հին են ցաւերս , հեծեմ և ես .  
Ժամ է իջնեմ ՚ի գերեզման ,  
Երթամ վեհից Հայոցն ՚ի տես ,  
Վանայ կո՞նակք թող դիս ողբան :  
Եւ դու Մեհեկ կուլօս անյոյս ,  
Ո՛հ , ո՛չ , զընա՛ . . . զայ Արշալոյս :  
Ս. ԹԷՇԻԿԲԱՇԼԵԱՆ

### ԳԵՐՁԻՆ ԳԱՐՈՒՆ

Գորտնն է եկել նախշուն թեւերով ,  
Նախշուն թեւերը պէսպէս ձեւերով ,  
Գոյն գոյն ծաղիկներ կարմեր ու սպիտակ ,  
Վարդ , մնխակ , շուշան անուշ հոսերով :  
Երկինք ու երկիր քեղ տօնեն , գարուն ,  
Զի ես քան զամէն եղանակ սիրուն .

Նա անձրեւ ցողէ առաստ ՚ի վերէն,  
Դա օրհնել ապ քեզ եկւոր հաւերտն :

Ոսկի արեւը փայլէ քեզ վերէն,  
Կանսաբեր հովը փշէ ՚ի լեռէն,  
Ա՛խ, աղնիւ գարուն, եղանակ սիրուն,  
Սրդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն :

Գրլիսաքարչ երթամ ՚ի պարտէզ այգուն,  
Ախ ու վախ քաշեմ ևս անդ օրն ՚ի բուն,  
Զի կաց ինձ հանգիստ, ցընծութիւն սըրափ,  
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ անդորր է քուն :

Մոռած, պատանքած գեանին կեանք առիր,  
Տերեւթափ ծոտին առուերախիստ արիր,  
Քեզ թրոնոց երամ հանդէս կանչեցիր,  
Ինձ մենակ խեղճիս էսպէս մոռացար :

Առաջ գնա՛, գարուն, դէպ հիւսիսն ՚ի խոր,  
Գընա՛, կանանցո՛ւր դու անդ սար ու ձոր,  
Որոց ամհամքեր քեզ կան՝ սո՛ւր բարե,  
Քո հեշտ զալբառեամբ նոցա զուարձացուր :

Կուգաս գալ սարի դու ինձ կու գրանես  
Ո՛չ ՚ի մեր այգին և ո՛չ ՚ի պարտէզ,  
Այլ անդարթ քընով հովի տակ պակած,  
Գերեզմանաքար մի վրաս կու ահանես :

Ա. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

## ԵՐԳ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Վրէժ կը գուան շիրմաց խորէն  
Գու դիւցանց առուերքն ահեղ.  
Վրէժ կը մրմռան արդ տիսրօրէն  
Մեր հէք եղբարց արեան հկղեզ :

Մասեաց ժեւուա սարն բոցավէժ  
Մեր սրաերուն խոր ժայթքէ վրէժ ...  
Օ՞ն, անվեհեր վանենք զրկանք  
Որ Հայաստան առնէ նոր կեանք :

Բիւր սուր, հուր, մահ,  
Զազդեն մեզ ահ ...  
Արդ քաջալանջ  
Նետուինք յառաջ :

Մուր մը յագուրդ  
Վաս և անգութ՝  
Թող թրչնամեռն  
Խրմէ արիւն ...

## ՆՈՐԱՅԻՐ

Կայծակնահար թող կորնչին,  
Որք կը մասնեն հայրենիքնին :  
(Սեւ Հաղեր)

ՊԵՏՐՈՍ ԴԻՌԵԱՆ

## ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

Տարի մ'ալ անցաւ,  
Գընաց սահեցաւ,  
Այլ դու, Հայ զինուոր,  
Թափառեալ մընաս  
Յերկիր հեռաւոր:  
Մուգ անմըլիթար  
Զքեզ շուրջ պատած,  
Եւ զժբախտ սիրադ ալ  
Յուսաբեկ եղած.  
Մուրդ ու քու տէզդ  
Ժանդոս վար դըրած,  
Եւ զօրեղ արմուկդ  
Տիգիր յեցուցած:  
Դի՛ր դու, Հայ զինուոր,

Քու յոյսդ առ Աստուած,  
Վեր վերցուր գլուխդ .  
Տե՛ս, ովէ կանդնած .  
Առ քեզ կ'ակնարիէ  
Ազատիչն Աստուած ,  
Յաղթութեան պըսակ  
Իւր սուրբ ձեռք բըսնած :  
Ուրիմն առ նիդակդ ,  
Ուրք ելիք կանդնէ ,  
Եւ սրբուր խորէն  
Անոր փառք խրբէ :  
Վհատիր մի՛ բընաւ ,  
Քաջ զինուոր դու Հայ ,  
Զի այսուհետեւ  
Էն Աստուած դըթած  
Էնդ քեզ է յաւէտ .  
Յաղդասէր մըցանադ .  
Կուտայ քեզ պըսակ ,  
Բոլոր ճըգանցդ փառք ,  
Եւ աղատութիւն :

Մ. Ա. Յ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆՑ

ՊԱՆԴՈՒԽԾՆՅԵՐ ԱՌ ԼՈՒՍԻՆ

Նուազեալ կենաց իբրեւ յոյս ,  
Մութ և տիսուր ես ո՛ կոյս .  
Ել, ել լուսին, ո՛հ և զուն ,  
Միբա մի ունիս զզայուն .  
Ազգ մի թըշուռ Հայրենիք ,  
Որ քօղ առեր ես զամպիկ :

Բնութիւն գեղոյդ երաժիշտ ,  
Քեզ աստեղաց հոյլք նամիշտա .  
Եւ անհուն սիրուն ժըպիտ մի ,  
Կարգեց դըշխաց զքեզ երկնի .

Յօղէ նշոյլդ արխանոյչ ,  
Պանդուխտ հոգւոյս ցաւոց բոյժ :  
Ո՛հ, փշեցան սիրտս ու քնար ,  
Ես ալ քեզի պէս զաշխարհ .  
Պանդուխտ քայլով չափեցի ,  
Ծաղկունք ծըլին սոսկ քեզի .  
Չեկաւ զեփիւռ մ'անուշիկ ,  
Շոհել իմ գէմքս յուսալիք :

Հող մ'ունէի Հայրենի ,  
Դըրախտ շքեղ աշխարհի .  
Աւերակացն արդ սպահպան ,  
Քիւրան և անոր հրացանն .  
Յուցուր ժանաից, ո՛ լուսին ,  
Զաղիր ոսկերք Վասակին :

Աղդ մ'ունէի այն Հայն էր ,  
Որ երկրիս վրայ տարուքեր .  
Կ'երթար օտար ազգերէն ,  
Մուրալ լեզու և օրէն .  
Լուսին , ցուցուր դու Հայուն ,  
Փառքն իւր նախնեաց շիրմերուն :

Սիրտ մ'ունէի , այն կոյմն էր ,  
Որ իմ հոգիս էր գրաւեր .  
Ծաղկէ հասակ , ծաղկի գէմք ,  
Հուր աշքն առին շիրմաց վէմք ,  
Մեռնի պանդուխտ ալ , լուսին ,  
Դու այցելու ել շիրմին :

Ս. ՀԷԳԻՄԵԱՆ

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ  
ԳԱԲՐԻԷԼԻ ԵՐԱՆԵԱՆ

Քու ցուրտ չիրմիդ վրայ ուր, վահն, կայ թողառած,  
Առայգ հասակդ և արբանիդ հուր երեխասալաց  
Զէ թէ միայն ափսենք ձաղիկ լի ձեռքով,  
Զէ թէ միայն արցունք անհուն ցաւերով.

Ալ և ձօնենք վշտոհար  
Երգերն անոյշ Քիւսորին,  
Որոյ վասիուկ թելերը  
Դու հիսուցիր սրտադին :

Այն նուազներն որ քու բերնէդ որդացան,  
Երթալ յողջոյն աւերակաց ցիր և ցան.  
Լըսեց զանոնք ՚ի դամբանացն Հարդինիք  
Եւ ափսիեցան Հացասանեաց վեչ Ոզիք :

Լըսէ զանոնք և դու եւս,  
Մահանն քունէն արթքնցիր.  
Այն Քնարին թեւերով,  
Յանմահաթիւն ե՛լ թոփ'ր :

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ  
Եղանակ ( լա Մարտէլէկո )

Օն, վութացէք, հասեալ է ժամ,  
Հարէք մարտի վաղերն ուժզին,  
Մեղ անարկու կայ պատերազմ,  
Երեսուի զնեալ է թրչնամին :

Փշերմք ազատ, բանամք զըսներ,  
Չար նստիսնձուն մեր սիսերմ :

Որ գարերով է մեզ վասկեր,  
Ի կուրութեան ՚ի բանտ մթին:  
Ի զէն, օն, վութացէք  
Գունդ՝ ՚ի գունդ, Հայ դասերք,  
Լուսով այս նոր ապրոյս վանեմք  
Բանտութիւն, զաւ ու նկնդ :

Մեր մարք, մեր քարք խոցեցան շատ  
Երզթայրական ՚ի գերութեան,  
Մինչդեռ մաք հարք, եղբարք ազատ,  
Անփոյթ էին կայր վկուրայն :

Որդ և սոքա լուսով ուսման  
Տեսան վերքերն իրենց ազդած,  
Աւսոփ լինին մեզ օդնական,  
Առնել նստիսնձն արտահալած:  
Ի զէն, օն, վութացէք, ևայն :

Ազատութեան կոնդնեմք գըրօչ  
Մեր իզական վասիուկ սեռին,  
Տեսնեն մեր քաջ ընկերք անյուշ  
Թ՛ այնու իրենց է մեծ բարին :

Նոր ապրոյ զէնք սուէք, զիմուորք,  
Մեր բառն ընմնք Հաւատք, Յոյն, Մէր,  
Իմաստութեան վասիրք եմք, քորք,  
Այս մեզ վասք, սրակ, ացո ձեզ հրաւեր,  
Ի զէն, օն, վութացէք, ևայն :

Ն Ե Զ Ե Ա Ա Բ Դ Ի Ս Ա

Ննջեա՛, որդիս, անուշ քնով  
Օրօր կասեմ ու նամի,  
Քնոյ հրեշտակ իւր թևերով,  
Քո երեսին հով անի:

Ննջեա՛ ննջեա՛ անուշ զաւակ,  
Ճուաւ մեծացիր ու մարդ դառ,  
Հայրենիքիդ լեր պիտանի,  
Նորա արեան վրէժն առ:

Դիտես արդե՛օք ո՞վ էր պասպոր  
Եւ ինչ գործեր նա արաւ,  
Նա վարդանն էր որ իւր գործով,  
Հայրենիքին փառք բերաւ:

Քո անունն էլ նոյնպէս վարդան,  
Քաջ վարդանին նմանիր,  
Նորա տւած օրինակով,  
Հայրենիքիդ ծառայիր:

Գիտացիր որ ամմայն մարդ,  
Պարտական է իւր ազգին,  
Սիրել օգնել թէ որ պէտք է,  
Հայրենիքին զո՞ւ լինել:

Դէհ, մեծացիր ու քաջացիր  
Ազգիդ վրաց մտածիր,  
Չեռքէդ եկած ամշն բարիք  
Նորա համար մի խնացիր:

ԿՈԶ ՀԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԵՐՈՒՆ

Անգիտօրէն զիս դասում են,  
Խօսէ՛ք Հայաստանի լեռներ.  
Եղբայրս ինձանից զատում են,  
Խօսէ՛ք Արարատեան լեռներ:

Մեր ինդիրքին չեն դնում ականչ  
Ասում են, սուտ է ձեր պահանջ  
Բայց այս հողեր ումն էր առաջ,  
Խօսէ՛ք Հայաստանի լեռներ:

Գուցէ յիշէք դուք այն օրը  
Երբ պապս լրծած արօրը  
Վարում էր ձեր դաշտն ու ձորը  
Խօսէ՛ք Հայաստանի լեռներ:

Գիտեն իմ պապիս անունը  
Բայց սում են ուղղութիւնը  
Գոմէ նրան պատմութիւնը  
Խօսէ՛ք Հայաստանի լեռներ:

Լեռներ ձեզ մնաց ամենայն բան  
Գուք կանգնեցէք վկայութեան  
Ումն էիք սում Հայաստան  
Խօսէ՛ք Հայաստանի լեռներ:

Եւրոպ չանսաց մեր ինդիրքին  
Երես գարծուց Հայոց դատին  
Արիւն ելաւ ծածկեց զետին  
Խօսէ՛ք Հայաստանի լեռներ:

Է Ա Կ Ե Բ

Բարի գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,  
Փայլեցնում է արեւի պէս պատկերը մարդուն.  
Մինչ մարդ անհնայ իւր մօար հաւասարիմ ընկեր՝  
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Կեանքդ հուիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ  
Այնպէն է հոգեկան լուսաւու լավտերը մարդուն,  
Ընկեր եմ ասում, ասուուածովախ ձևմարխս ընկեր,  
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Թշնամիները իր վերաց քալած ժամանակը,  
Կտրիճ հարազատ ընկերն է սուսերը մարդուն.  
Ով որ ունենաց Զիւան աշբգ, մուերիմ ընկեր,  
Չը սպիտակիլ ամենեւին մէկ հերը մարդուն:

Կ Ո Ր Կ Ո Տ Ե Ա Ն Ի Ե Բ Գ Բ

Զէնքերս տուր մայրիկս, սուրմաս տուր քոյրիկս,  
Թէ որ ազգիս չզոհուիմ, ապա ինչո՞ւ ծնար զիս:

Առաւու արշալոյսին չորս կողմերս պատեցին.  
Չորս դին չորս հաղար զօրքեր, չորս հաղար թշնամիներ:

Ազատութեան վաս մէրը ինձ հանել է լեռները,  
Վաս թշնամու դէմ կոտելու՝ Հայաստանը փրկելու:

Լեւոն սուրդ քաշեցիր, վրէժ տանել ուզեցիր,  
Երբոր զնտակը դիպաւ՝ «ա՛ի Հայաստան» գոչեցիր:  
Մայր մնունս Սրամեան մականունս կորկոտեան.  
Երբոր բանտից ազատուեմ դարձեալ խմբեր կ'կազմեմ:

Ա Ա Գ Ո Յ Ի Ե Բ Գ Բ

Այն օրը, որ ես քեզ տեսայ էլ ուրիշն չը սիրեցի.  
Գիշեր ցերեկ աղաչելով՝ քաջիդ կեանք արեւ խնդրեցի,  
Այդ պատճառով շատ սիրեցի, որտեղ տեսայ Սեւքարեցի,  
Սեւ-քարիդ զուրպան Սաքոյ ջա՞ն, ջան ջինա՞ն ջան:

Բորիկ ոտով ուխտ գնացի, փառք Աստուծոյ մուրաստ առայ,  
Այն ինչ երջանիկ օր էր, որ քեզ սկզբում Դերիկ տեսայ,  
Դերիկիդ զուրպան Սաքոյ ջա՞ն, ջա՞ն սալան ջան:

Հարց արեցի վարդապետին ասի, ո՞վ է այդ արեզան  
—Սրեղայ չէ հոգիս, զինուոր է այդ սիրուն տղան.  
Զինուորիդ զուրպան Սաքոյ ջա՞ն, ջա՞ն սալան ջան:

Պատարագ վերջացրին, գնացին զարկելու նշան,  
Մեկին Պետո մէկդին Կարօ, ինչ սիրելի ընկերներ կան.  
Ընկերիդ զուրպան Սաքոյ ջա՞ն, ջա՞ն սալան ջա՞ն:

Երկար յաղթութիւնից, տանջանքների դէմ կոռելով,  
Անյաղթ ջան-փիդայ, մեծ-մարդ կոչման արժանացար  
Այդ դէսկըումն էլ պատմութեան մէջ անյաղթելի փառք  
առացար,  
Անյաղթիդ զուրպան Սաքոյ ջա՞ն, ջա՞ն հայդուկ ջա՞ն:

Հ Ա Բ Ը Ր Բ Ա Ն

|       |                         |
|-------|-------------------------|
| Տղայ  | Հա՛բրբա՞ն               |
| Աղջիկ | Ջա՞նէ ջա՞ն.             |
| Տղայ  | Սիրել եմ՝ սերն երեսին,  |
| Աղջիկ | Անթառամ թերն երեսին,    |
| Տղայ  | Ով իմ սիրան ինձ չի տայ, |
| Աղջիկ | Ասործու կերն երեսին:    |
| Տղայ  | Հալրբբան,               |
|       | Ջա՞նէ ջա՞ն.             |

Աղջիկ

Սարի թըրթընջուկ թազա,  
Մեղքը ու չաքար քեզ մազա.  
Ինձ պէս նազանի աղջիկ,  
Քեզ պէս տըլին ո՞նց սազայ:

Տղայ

Պըզտի'կ աղջիկ . համ ունիս,  
Չորեքդիմաց ծամ ունիս,  
Խունջիկ-մունջիկ մի՛ անի,  
Ինձ առնելու կամ ունիս :

Աղջիկ

Գութանըդ հոլա՛ , հոլա՛ ,  
Գութանիդ տակը քոլ ա ,  
Բանի գըժութիւն անես ,  
Քեզի առնողը տոլ ա :

Տղայ

Զեր տան տակին վար կանեմ ,  
Զար աղուաւին քար կանեմ ,  
Թող իմ սիրածն ինձի տան .  
Գըժութիւնը թարկ անեմ :

Աղջիկ

Զո՞րը իր ջամբով կերթայ ,  
Ցօպածը վարդի թերթ ա ,  
Ինձ սիրող կըտրիմ տըլին  
Հալարի մէջ մը բերդ ա :

Տղայ

Բուսել ես բաղի միջին ,  
Շամամի թաղի միջին .  
Գիշեր ցորեկ միալար ,  
Դու ես իմ խաղի միջին :

Աղջիկ

Աշուղի պէս խա՛ղ ասա ,  
Բըլբուղ պէս տա՛ղ ասա ,  
Ինչքան որ գովես՝ արժեմ ,  
Իմ մօր գովական փեսայ :

## ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃ

Հազիւ լրացաւ քանն մէկ տարիս ,  
Աղուամազ բաւ երես ծնօտիս ,  
Թշերէս կարմիր վարդեր կը կաթի ,  
Զիղերս ամուր ասես երկաթի .

Տուէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ ,  
Ծառը արմատով գետինէն հանեմ ,  
Սուր ականերովս երկաթ կը ծամեմ ,  
Մէջս այդքան ոյժ , ասէ՛ք , ի՞նչ անեմ :

Առջեւս դրէ՛ք մարդ հարիւր ու հազար —  
Զարդեմ արորեմ զերդ բողկ ու գազար ,  
Ինչ այլք չորթու մէջ՝ այն ես օր կանեմ . . .  
Մէջս այդքան ոյժ , ասէ՛ք ինչ անեմ :

Ինձ պէս բիւրերով լի է Հայտատան ,  
— Նրա սուրբ հողին ըլլեմ ես զուրսպան —  
Մարմինը ուժեղ և առոյդ է Հային ,  
Սյլ , ափա՛ս , թմրած է նորա հողին :

Թէ մի օր զարթնի նորա վեհ հոգին ,  
Նա պարզ կը ցուցնէ հեթանոս ազգին ,—  
Ո՞վ էր երլուսէն սորուկ եւ կամ տէր . . .  
Ա՛խ , ե՞րբ պիտ թողաք , ին՛զ Հայի սրտեր :  
ԳԱՄԱՌ-ՔԱՅԻՒԱ

Կ Բ Ա Ն Բ Ա Մ Բ Ո Ւ Լ ի

Կրանկամբուլին այն օղին է  
Որ մեղի քոջ ձանօթ է ,  
Կը խմեմ ես կը զուարծանամ  
Բոլոր աշխարհք հոգս չէ .

Երկինք երկիր թէ կործանին  
Ես կը խմեմ կրանկամբուլին :

Թէ սիրուհիս գայ զիս զրկել  
Երեմներըս համբուրել,  
Կորիր, կըսեմ, շուտ առջեւէս,  
Ա՛ւ դու ինձի համար չես:  
Ահա զրկած իմ սիրուհին  
Ես կը ճնկեմ Կրանքամբուլին:

Թէ լիրդս ու թոքս, սիրսս ալ մաշի,  
Ասով միայն կ'առնեմ հոգի,  
Թէ հոգեվարք պառկած ըլլամ,  
Մէկ կաթիլով կ'ըռընանամ.

Դայեակ, բժիշկ, եւ ոչ մէկին  
Ես չեմ փոխեր Կրանքամբուլին:

Թէ նազեքայլ աղջիկ մ'ինձ գայ  
Սիրոյս համար լայ ողբայ,  
Հազար կտոր կոտրառուի նէ,  
Բնա՛ւ իմին հոգս չէ.  
Բայց շատ կ'ոլբամ երբոր իրարի  
Շին ու գաւաթ Կրանքամբուլի:

Թէ թատրոնի համար ինձի  
Օթեակի մը տունակ զրին,  
Մէկէս կ'առնեմ կը պատուեմ,  
Բերողն ալ կը դրոշմեմ.  
Թատրոն դպրոց գետին անցնին,  
Իմ սիրածս է Կրանքամբուլին:

Թէ կիսս տղաքս բոլոր օրը  
Զըլլան պատու մ'հայ կերած,  
Ցաւ չեմ զգար, զի իմ փորը  
Շաբաթներով հայ չէ մտած,  
Առանց հացի թող սովորին  
Տղաքս խմել Կրանքամբուլին:

Թէ հարսնիքի զիս հրաւիրեն  
Ոտքով գլխով կը վաղեմ,

Մէկ բարձի վրայ ծերանալնուն  
Հազար տարի կը մաղթեմ:  
Հարար թող տան իրեն փեսին  
Ինձի ձգեն Կրանքամբուլին:

Թէ յանկողին հիւանդ պառկած  
Հոգի տալու մօտ ըլլամ,  
Բժիշկն հարցնէ թէ ի՞նչ կ'ուզեմ,  
Անմիջապէս իրեն կ'ըսեմ.  
«Պարոն բժիշկ, իմ գեղ դիւրին՝  
Է Հրաշագործ Կրանքամբուլին:»

Թէ մեռնելու օրերուս մօտ  
Հոգէառս դէմս ելնէ,  
Ո՛հ, այն ատեն թող բաժկիս հետ  
Հոգիս մարմնէս դուրս ելնէ.  
Բայց մինչեւ որ հոգիս քակուի,  
Պիտի կըլլեմ Կրանքամբուլի:

Թէ գերեզման մտած ըլլամ  
Զըլլայ երեւք զիս մոռնաք,  
Գացէք գտէք իմ գինեպան,  
Այս է վերջին իմ կտակ,  
Մեռած օրուանս կիրամուտքին  
Աղէկ ըլլայ Կրանքամբուլին:

Գ. Հ. ԱՇՏՈՒՆԻ

## ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Դու անցար, հերո՛ս, գէ՛հ հանգի՛ստ քեղ քուն,  
Դու լուսադէմին մեռար լիայոյս,  
Դու ձամբորդ միր գէպ ազատութիւն,  
Երբ գեռ հեռո՛ւ էր հեռո՛ւ, արշալոյս:

Տե՛ս ի՞նչ հերոսներ՝ երգովդ ստեղծուած՝  
Փակեցին աշքերդ, որ հանգիստ առնուս,

Հերոսների մէջ դու մեռար հերուս,  
Մարմինով դարձար հող, հոգով արշալոյս :

Ե՛րնէկ քո յոցին, նա՛, որ չէր դողում,  
Երբ թոյլ անքում էր մեր ճահիճն անցոյս.  
Այս օձե՛ր էին եւ գործեր տողում,  
Քանզի գալու էր անշուշտ արշալոյս :

Սակայն երբ ազգդ թմրկով ու փողով  
Դէպ' երբ աղատութիւն երթայ սրտացոյս,  
Դու կըսս այնտեղ յարութեան շողով,  
Բայց ննջի՛ր . . . գեռ կայ մինչեւ արշալոյս . . . :

### Ա. Պ. Զ Կ Ա Յ Ե Բ Գ Լ

Հանդիսա իմ անուշ, անցար գնացիր,  
Միայն վէրքն անբայժ սրտումն թողոցիր.  
Սոխակ գեղեցիկ կանաչ պարտիզում,  
Երգելով քաղցրիկ ինձ չէ գրաւում :

Քեզանով միայն երջանիկ էի,  
Տիկին ինքնիխան ինձ կարծում էի.  
Ցերեկը մենակ փակուած սենեակում,  
Ողբում եմ անյագ ոչ ոք չէ լուսմ :

Գիշեր է գալիս մահիծ եմ մտնում,  
Տրտում է հոգիս քունս չէ տանում.  
Մազեր թուխ երկայն, աչեր զրաւիչ,  
Ի՞նչ հասակ ի՞նչ ձայն, ինչ հոգի կարիծ :  
Ո՞հ սիրսս այրուած ողջ քեզ է կանչում,  
Ողջ քո անմոռաց անունդ եմ յիշում,  
Անզութ ինձ խարեց, որիշին սիրեց,  
Ալս, նա ինձ գեռ վա՛ղ, դազաղ պատրաստեց :

Ա. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ի Ն Գ Ը Լ Ա Պ Ա Բ Շ Ե Ը

Օրտումուզ իթտի հէմին,  
Թիթրէթի խաք ու զէմին  
Միլէթի իթտիք էմին  
Աչըլտը բահ ը նէլին :

### Նազարար

Սահնազըմիզ, շանըմրզ,  
Օսմանլը իւնվանըմրզ,  
Վաթան սիզիմ ճանըմրզ  
Ֆէտա օլմուն գանըմրզ :

Թէրքի արամ էլլէտիք,  
Ճէհա ու իդտամ էլլէտիք,  
Նէշը ի մերամ էլլէտիք  
Հազլա գըյամ էլլէտիք :

Օսմանլը ահֆատըմրզ  
Պիր վաթան էվլատըմրզ,  
Միլէթին էֆրատըմրզ  
Հիւրրիէթ էշատըմրզ :

Աղաձլա օթտղըմրզ  
Շու թաշար եաթտղըմրզ  
Սէօնախրիւսլ օճաղըմրզ  
Երգտըլար պուճաղըմրզ :

Օսմանլը՝ թազ ը քէրիմ  
Սահիզի սէշիք ը գավիմ  
Նէճլ ի նէճիզի ի գատիմ  
Էսիր օլմոզ գէք ատիմ :  
ՄԱՅ. ՃԷԼԱԼԷՏՏԻՆ

## ԶԱԽՈՐԴ ՕՐԵՐ

Զախորդ օրեր ձմբան նման կուգան ու կերթան,  
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան,  
Դասն ցաւերը մարդոց վրայ չեն մնար երկար,  
Որպէս յաճախորդ շար ու շարան կուգան ու կերթան:

Փորձանք, հաղածանք եւ նեղութիւն ազգերի զլմին,  
Խնչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան,  
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,  
Որքան մանիշակ, վարդ պալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ եւ ոչ տկարը տիրի,  
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան.  
Արեւը առանց վախենալու ցայտում է լոյսը,  
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,  
Սնկիրթ ցեղերը թափառական՝ կուգան ու կերթան  
Աշխարհը հիւրանոց է Զիւան, ազգերը հիւր են,  
Այսպէս է կանոնը բնական. կուգան ու կերթան:

ԱՇԳ-ՑԻՒԱՆԻ

## ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

Մասի ճակատին ամպրով պատռեցաւ,  
Հայերուս սրտէն վախ փարասեցաւ,  
Նժոյգ է տակար, ձեռիս այնայու,  
Սուլթան՝ ունիս ուժ՝ ինձ դիմանալու.  
Բատրուկ եմ եկել, կը դառնամ աղատ,  
Յետ խրլած քեզմէն հողն իմ հարազատ:

Անսուտ երդումով ուխտել եմ ազգիս —  
Չոնել մարմինը զոնել եւ հոգիս,  
Արհամարհել սով եւ անդորրութիւն,  
Տալ Հայաստանին սուրբ աղատութիւն:

— Հասրուկ եմ եկել կը դառնամ աղատ,  
Յետ խրլած քեզմէն հողն իմ հարազատ:

Ել ես ահ չունիմ քու վախկոտ զօրքէն,  
Զգուած եմ ես քու շարեաթ օրէնքէն,  
Մշու դաշտերը Վան ու Սրզրում  
Կ'լուանան զօրքիդ սեւ ու պիղծ արիւն.  
— Հասրուկ եմ եկել, կը դառնամ աղատ,  
Յետ խրլած քեզմէն հողն իմ հարազատ:

Թըստուա՛ռ, քու յոյն է Զէրքէզն ու Քուրդը —  
Հա՛, մէկ քամբին տամ նոցա բուրդը.  
Զեռքիս ունիմ ես Ղեւսնդի լախտը,  
Որ Հարդեմ փշրեմ քու փրտած թախտը.  
Սուլթան՝ սիրտ ունիս իջիր մարտի դաշտ,  
Տե՛ս քու առջեւն է թշնամիդ անհաշտ:

ԳԱՄԱՌ-ՔԱՅԻՌԱ

## ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾԵՌՆԱԿ

Ով ծիծեռնակ, վարանած թունիկ, ի՞նչ տիսրազին  
Ձայնիւ ձայնիւ կ'եղանակես մօտ իմ բանափին.

Միթէ վարուժանըդ սիրուն  
Հոս միայնակ թողուց զքեզ  
Եւ դուն անմիմիթար կը հեծես.  
Ոհ, լաց ուրեմն ինձի պէս :

Բայց երանիք քեզ բիւր երանի, կրնաս թուչիլ.  
Թեթեւ թեթեւ թեւոցդ ի ծայր ընդ սար եւ ձոր.  
Իսկ հոս արեւուն նշոյլն աղօս  
Մութ բանտիս է անթափանց.  
Եւ ոչ մեղմ հովիկ մ'ալ կը փչէ  
Ոհ տանի ձայն իմ սիրելեացս,

Գէթ դու գնա՛ գտնել սիրելիդ, պացիր արագ.  
Սակայն սակայն դարձիր նորէն մօտ չուասիս.

Եւ հսու հանգչէ այս իրիկուն  
լե՛ր դու վկաց տխուր մահուանս,  
Եւ իմ շլրսիս վրայ ճըւճըւալով  
Գէթ դու յիշէ զիս անմուաց :

---

### ՏՈՒԻՐԲ ԱԽԻ ԵՐԳԸ

— Ուրեմն մասք բարո՞վ աղնիւ ընկերներ,  
Մեռնեմ ձեր հոգուն երջանիկ քաջներ,  
Քո հողին մեռնիմ Տալւորիկ աղատ,  
Կեցցես դու յառէտ . Անդրանիկ քո զարդ :

Քաջի համբոյրով տուաւ հրաժեշտ,  
Անվեհներ Տուրբախ ընկեր հարազատ,  
Ռոպէ անցաւ պացաւ ուժգին,  
Վեհ դաշնակցոթեան սուրբ անուան արժան :

Երկինքը պատել էր գունդ-գունդ սեւ ամպեր,  
Սրեգակ չկար, մութ ու խաւար էր,  
— Դժուար էր զատուել քաջ ընկերներից,  
Հայ ազգի սրբած ու պաշտած տեղից :

Հեռուից տեսնող՝ էլ ու աշխաթ,  
Երնէկ կուտային քեափուր Տուրբախին .  
Ա՛ն ու սարսափով լցուած քուրդ միլլաթ,  
Կապուտ աչերից արցունք կը ցայտէր :

Նժոյգ ձի նատած անսելի գէմքով,  
Երկինք ձայն տւեց վեհ քաջի արարք,  
Խնուռաց փաշէն լցուած էր դողով,  
Թռչում էր ցոլակ, ցայտում էր կրակ :

Ահնամբեր սրտով Դաշնակի ձխողեր՝  
Կտրիմ Տուրբախի գալուն կը սպասեն,  
Փառք ու պարծանք ին մեղ այսպէս քաջներ,  
Ուրախ լուր բերաւ ազստ Սասունէն :

---

### ԳԻՇԵՐ ՑԵՐԵԿ

Գիշեր յերեկ մորմոքում եմ, ի՞նչ անեմ,  
Կարօտդ քաշում եմ տարով նազանի,  
Հանգիստ չունիմ, անդադար եմ քեզ համար,  
Ցաւերս թեթեցուր սերով, նազանի,

Մէկ տեսքդ տեսնողը քերնից կ'ամաչէ,  
Ծանօթացի՛ր, սիրականիր ճանաչէ',  
Հագած զգեստդ ալ ու կանաչ է,  
Փաթաթուել ես ձերմակ զարով նազանի:

Թալալօղին խմնց երազումը թաս,  
Քաղցրանաս, դու մեզի անուշ բարեւ տաս,  
Երանի այն օրուան, որ մեր տունի գաս,  
Պարտուիմ զիսովդ բարով, նազանի:

---

### ՎԱԹԱՆ ՇԱՐԳԸՍԸ

Էյ վաթան, էյ խմմի միւշփիք շատ ու խէնտան ոլ պու

Ալէմ ի Օսմանիսանս փէրթէվ էֆշան ոլ պու կիւն  
Գուրթո՛ւլ, էպր ի հիւշքեարինստէն սէմա ի սաֆէ չըգ  
Գալափիր օլսուն միւննէվզէր, միհրի լաշիսն ոլ պու

կիւն

Պաշին օլունտու կայրի հիւրրիյէթ, հիւրրիյէթ պու կիւն  
էվլատընա

Կէլ, կէլ էյ խաքի մուգատաէս մաղճարը շան ոլ պու

կիւն

Սինէնի չաք էլլէ, կէօրսիսն պունլարը էճտատըմըզ,  
Սնէլէրին էրլահընա լէհպէր, նիկէնպան ոլ պու կիւն  
Գոշ պիւթիւն էվլատ ու անփատընլա պապը վահութէ  
ՆԱՄՑԳ ՔԷՄԱԼ

ԱՅԲՈՒԲԵՆԱԿՈՆ ՑԱՆԿ Գ. ՀԱՏՈՐԻ

|                                            |     |
|--------------------------------------------|-----|
| Ա. Թող գաղրին կայլակը . . . . .            | 246 |
| Ա. ու ալուան ես հաղել . . . . .            | 218 |
| Ա. Վասպուրական ախուր Հայաստան . . . . .    | 235 |
| Ա. ա գարուն գեղածիծաղ . . . . .            | 195 |
| Ա. ա ծագեց կարմիր արև . . . . .            | 213 |
| Ա. մէն առառ ոչխաղներս կ'առնեի . . . . .    | 243 |
| Ա. յն օրը, որ ես քեզ տեսաց . . . . .       | 275 |
| Ա. ն զթօթէն զիս գատում են . . . . .        | 273 |
| Ա. ո կիթաւուդ ո՛ սիրուհիս . . . . .        | 252 |
| Ա. բ գեօք սրբափս իմ տիրապին . . . . .      | 249 |
| Ա. րեւ, արեւ գուրս ելիր . . . . .          | 200 |
| Ա. րթնցիր տիկին քունէդ . . . . .           | 258 |
| Ա. րի իմ սոխակ, թող պարտէդ . . . . .       | 212 |
| Ա. րիք Հայեր լուծը թոթուենք . . . . .      | 209 |
| Ա. րիք սանուհիք, որդիք . . . . .           | 216 |
| Ա. րշապիսը նորէն բացւու . . . . .          | 240 |
| Բ. անտիս զններն էին եօթը . . . . .         | 233 |
| Բ. արի գեղեցիկ սուտքինի ընկիր . . . . .    | 274 |
| Բ. աւ է որդեակը այսքան տարի . . . . .      | 204 |
| Բ. երին աթոս, ելաւ չորս կողմ . . . . .     | 211 |
| Գ. ալլըն էյ վաթանսաչար . . . . .           | 256 |
| Գ. արտնն է եկել նախշուն թեւերով . . . . .  | 265 |
| Գ. ացէք, տեսէք, ո՞վ է կերել զէծ . . . . .  | 204 |
| Գ. իշեր ցորեկ մորմուգում եմ . . . . .      | 285 |
| Գ. իշեր ցերեկ կը հասաչեմ ախ . . . . .      | 249 |
| Գ. ալիշու ճամբէն տողջա . . . . .           | 255 |
| Դ. ու անցար ներսու, դէն հանգիստ . . . . .  | 279 |
| Ե. թէ կամինք քրիել թշուառ . . . . .        | 220 |
| Ե. նեմք որդիք սուրբ ներսէսի . . . . .      | 227 |
| Ե. բրոր մայրը երկունքով . . . . .          | 230 |
| Ե. րկիր քաջազանց . . . . .                 | 197 |
| Ե. ասէին, զհայրենեացդ . . . . .            | 232 |
| Զ. արթեաւ սուսեր ի պատենի . . . . .        | 237 |
| Զ. էլլունցի ենք, մենք քաջ ունինք . . . . . | 219 |
| Զ. էնքերս սուրբ մայրիկս . . . . .          | 274 |

|                                           |     |
|-------------------------------------------|-----|
| Է. յ վաթան էլլ իւմմի . . . . .            | 285 |
| Է. ր հեռանսա քո մայրենի . . . . .         | 247 |
| Թ. ող կորնչին վաստ քիւրտերը . . . . .     | 239 |
| Թ. ող պլպուլ չերգէ Մշոյ . . . . .         | 208 |
| Ի զուր են ի զուր բրանտուոր . . . . .      | 198 |
| Ի մ անուշիկ մայրիկս . . . . .             | 244 |
| Ի մ գլխու գութէն կիսամ . . . . .          | 202 |
| Ի պամական գոս վաշտերը . . . . .           | 206 |
| Լ. ընձի մէջ նաւակը . . . . .              | 253 |
| Լ. ընձի մուստ գիշեր էր . . . . .          | 201 |
| Լ. ուսին չկար մութ գիշեր էր . . . . .     | 20  |
| Խ. ազալ գաշտի որդիք . . . . .             | 200 |
| Խ. աւարել եմ ինչպէս գիշեր . . . . .       | 200 |
| Կ. ար ժամանակ որ և Հայերն . . . . .       | 228 |
| Կ. ըսեն թէ աղջիկ մր . . . . .             | 226 |
| Կ. րանդամիւլին այն օղին է . . . . .       | 277 |
| Հ. արբրբան շանէ շան . . . . .             | 275 |
| Հ. ազիւ լուսոյ դողդոյ փայլ . . . . .      | 250 |
| Հ. ազիւ լրացաւ քսմանչկ տարիս . . . . .    | 277 |
| Հ. ազիւ կրացաւ կրախտավայր . . . . .       | 228 |
| Հ. այստան երկիր գրախտավայր . . . . .      | 221 |
| Հ. այ եմ ես, մառնիլ գիացող . . . . .      | 236 |
| Հ. այշեր, այսօր ազատ կեսնքի նոր . . . . . | 196 |
| Հ. այշեր մինչեւ Ե՞րբ արտառուենք . . . . . | 215 |
| Հ. այցը բանախն չի վախնար . . . . .        | 197 |
| Հ. այկազմոնք պար բանենք . . . . .         | 223 |
| Հ. այրենիք սրբազն, իմ սիրուն . . . . .    | 256 |
| Հ. այրիկը ծերացեր է . . . . .             | 280 |
| Հ. անգիստ եմ անուշ, անցար . . . . .       | 217 |
| Հ. ասպա քաջազմնք, Հայոց . . . . .         | 226 |
| Հ. եռու եմ քենէ, օտար երկրի մէջ . . . . . | 248 |
| Հ. ով արէք սարեր ջան . . . . .            | 282 |
| Զ. ախորդ օրեր ձմրան նման . . . . .        | 233 |
| Զ. այն առար ո՞վ փէտու . . . . .           | 213 |
| Զ. մեռն անցաւ, գարուն է արդ . . . . .     | 282 |
| Մ. տափ ճակտին ամսւոպ . . . . .            | 206 |
| Մ. արտի գաշտը պլաք . . . . .              | 229 |
| Մ. եզի մացաւ Հայոց ազգը . . . . .         | 263 |
| Մ. ինք տնինք պելսեր մօրուք . . . . .      | 263 |

|                                           |     |
|-------------------------------------------|-----|
| Մի գեղեցիկ պարզ գիշեր . . . . .           | 209 |
| Մի երգիլ իմ սովորկ . . . . .              | 214 |
| Մի հեծեր մայր իմ , մի հեծեր . . . . .     | 244 |
| Մի ի շաւիդ ընդ մոլար . . . . .            | 231 |
| Մութէ գիշերս , ինչպէս սիրաս ալ . . . . .  | 264 |
| Մրցանակացն ենաս արդ ժամ . . . . .         | 224 |
| Նիջետ , որդիս , անուշ քնող . . . . .      | 272 |
| Նիջի՛ մանուկ իմ սիրասոն . . . . .         | 222 |
| Նուռ լեռալ կենաց իբրեւ լոյս . . . . .     | 268 |
| Շաս գարերու ցաւերով . . . . .             | 241 |
| Ո՞՛ , դու բարեկամ այրած արտերու . . . . . | 218 |
| Ո՞չ , եղբարք , ոչ , օտարներէն . . . . .   | 231 |
| Ո՞՛ երջանիկ դու նրժդեհ . . . . .          | 242 |
| Ո՞վ ծիծեռնակ վարանած թռչուն . . . . .     | 283 |
| Որչափ մարդիկ ափառ . . . . .               | 261 |
| Ուրեմն մնաք բարով աղճիւ . . . . .         | 284 |
| Պաղ ալբիւրի մօտին . . . . .               | 223 |
| Սիրել գաշնչն , ախ աստճանակ . . . . .      | 245 |
| Սիրեցի եարս տարան . . . . .               | 240 |
| Վայրագ քրդաց խօլ վաշտերը . . . . .        | 234 |
| Վրէժ կը գոռան չիրմաց . . . . .            | 266 |
| Տարի մ'ալ անցաւ դնաց . . . . .            | 267 |
| Տուր ձեռդ եղբայր , ժամ է . . . . .        | 199 |
| Փառք մեր անման և հարց . . . . .           | 238 |
| Քեզ ըսպասող չը մնաց . . . . .             | 207 |
| Քու ցուրտ վրմիդ վրայ . . . . .            | 270 |
| Օ՞ն փութացէք , հասեալ է ժամ . . . . .     | 270 |
| Երտումուզ իթափ եէմին . . . . .            | 281 |

-22300-

ՀՀ Ազգային գրադարան



NL0835308

2180